Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017 թ առաջին կիսամյակ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով ՀՀ կառավարություն է ներկայացվել 23 ծրագիր՝ 3.5 մլրդ դրամի ընդհանուր ներդրումների ծավալով, որից՝

1. Արդյունաբերական 8 ծրագիր 1 603 մլն դրամ
2. Գյուղատնտեսական 9 ծրագիր 390 մլն դրամ
3. Զբոսաշրջություն 8 ծրագիր 914 մլն դրամ
4. Առևտուր 2 ծրագիր 418 մլն դրամ

ՀՀ վարչապետի մոտ 20.02.2017թ. կայացած խորհրդակցության արդյունքում 8 ծրագիր արժանացել է հավանության: 15 ծրագրի քննարկումը հետաձգվել է կապված ներդրումայի ծրագրերի նոր չափորոշիչների հաստատման հետ:

Նշենք, որ ծրագրերի ձևակերպման և ֆինանսական ու շահութաբերության ցուցանիշների հաշվարկման ժամանակ որպես հաշվարկային ցուցանիշ նախնական պայմանավորվածությունների համաձայն հիմք է ունդունվել տարեկան 5-6% տոկոսադրույքով և մինչև 10 տարի մարման ժամկետով վարկերի տրամադրման հնարավորությունը:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները տարեկան թողարկում են 15-16 միլիարդ դրամի համախառն արտադրանք, գերակշռողը մշակող արտադրությունն է /հանքային ջրերի և խմիչքների արտադրություն/: Մեկ շնչի հաշվով արտադրվում է 320 հազ.դրամի արդյունաբերական արտադրանք:

Ընթացիկ տարվա վեց ամիսներին թողարկվել է 8.0 միլիարդ դրամի համախառն արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմում է 3 տոկոս:

2016 թվականին ընդհանուր առմամբ մարզի բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվել է 1մլն 125 հազ. դրամի համախառն արտադրանք: Մարզի համախառն արտադրանքը կազմում է հանրապետության համախառն արտադրանքի 1.2 տոկոսը: Ծառայությունների ծավալը կազմում է 6.8 միլիարդ դրամ, կամ մեկ շնչի հաշվով 134 հազ. դրամ:

Վերջին տարիներին մարզում ի հայտ են գալիս զարգացման նոր ոլորտներ, ինչպիսիք են հանքարդյունաբերությունն ու էներգետիկան: Բնակչության զբաղվածության խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունի ,, Ամուլսարի,, ոսկու հանքավայրի շահագործումը: Նշված հանքավայրի շահագործման համար 2017-2018թթ կներդրվի 370 մլն ԱՄՆ դոլար, կստեղծվի 1300 աշխատատեղ: Այժմ հանքավայրում աշխատում են 730 մարդ, որոնցից 350-ը մարզից են: Ընկերությունը պատրաստակամ է համայնքներում իրականացնել սոցիալական մի շարք

ծրագրեր: ,,Ամուլսարի,, ոսկու հանքավայրում ներդրումները կազմում են 117 ԱՄՆ դոլար, մինչև տարեվերջ այն կհասցվի 250 միլ. ԱՄՆ դոլարի:

Մարզում գործում են 32 ՀԷԿ, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 69 ՄԳՎՏ: Տարեկան արտադրվում է 192 միլ կ/ժամ էլեկտրաէներգիա: ՀԷԿ-ում աշխատում են 420 մարդ: Մասնավոր ներդրողների միջոցներով ֆինանսավորումը կազմել է 1038 մլն. դրամ /հյուրանոցների, հանգստյան գոտիներ, ՀԷԿ-ի կառուցում/:

Զբոսաշրջությունը մարզի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից է, և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզի տարածքում հաշվառված են ավելի քան 1300 պատմամշակութային հուշարձաններ: Բազմաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական ու կենդանական աշխարհի բազմազանու-թյունը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի հանքային ջրերի ճանաչելությունը մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ տարվա չորս եղանակների համար: Զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: 2016թվականի ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է շուրջ 42 հազարի, իսկ այս տարվա վեց միսներին այդ թիվը հասնում է 20400-ի, նախորդ տարվա 18300-ի դիմաց: Զգալիորեն զարգացել են ենթա-կառուցվածքները, բարձրացել է մատուցվող ծառայություն-ների որակը:

Մարզում գործում են 17 հյուրանոցներ, 68 հյուրատներ և 8 առողջարաններ: